



Բիզնեսի հաջողության հուսալի երաշխիք

*Փաստաթղթային ակրեդիտիվներ
և բանկային երաշխիքներ*

«ՎՏԲ-Ֆայաստան Բանկ» ՓԲԸ
միակ բաժնետերն է ՌԴ պետական
ՎՏԲ բանկ ԲԲԸ-ն

Փաստաթղթային ակրեդիտիվ

Միջազգային իրավունքում
փաստաթղթային
ակրեդիտիվներով
իրականացվող
հաշվարկները
կարգավորվում են
Միջազգային Առևտրային
Պալատի կողմից
մշակված UCP 600
համապատասխան
հրապարակումով:

Միջազգային առևտրում ներգրավված ընկերությունները արտասահմանյան գործընկերների հետ աշխատելիս միշտ ձգտում են նվազեցնել կամ չեզոքացնել հնարավոր առևտրային ռիսկերը: Փաստաթղթային ակրեդիտիվը պաշտպանում է կողմերի շահերը՝ ապահովելով պայմանագրով նախատեսված վճարային պարտավորությունների ճիշտ, լրիվ և ժամանակին կատարումը: Փաստաթղթային ակրեդիտիվը լայն տարածում է գտել միջազգային պրակտիկայում և տարեցտարի առավել մեծ պահանջարկ է վայելում հայաստանյան կազմակերպությունների շրջանակում:

Փաստաթղթային ակրեդիտիվը (Letter of Credit - L/C) իրենից ներկայացնում է թողարկող բանկի վճարային պարտավորություն, որը այն ստանձնում է հաճախորդ-իրամանագրողի (ապլիկանտ) հանձնարարությամբ հոգուտ շահառուի (բենեֆիցիար): Ակրեդիտիվի պայմանով վճարումը իրականացվում է միայն բենեֆիցիարի կողմից կատարող բանկին ակրեդիտիվով նախապես սահմանված փաստաթղթերը ներկայացնելու դեպքում:

«ՎՏԲ - Բայաստան Բանկ» ՓԲԸ ակրեդիտիվների առավելությունները

«ՎՏԲ» բանկային խումբը վայելում է արտասահմանյան գործընկերների բարձր վստահությունը, ինչը շատ դեպքերում թույլ է տալիս ընդունել ՎՏԲ կողմից թողարկված ակրեդիտիվները և երաշխիքներն առանց լրացուցիչ հաստատման անհրաժեշտության: Հաստատման անհրաժեշտության բացակայությունն էականորեն իջեցնում է գործարքի գինը հաճախորդի համար:

Բանկի մասնագետները կօգնեն Ձեզ ձևակերպել արտասահմանյան գործընկերոջ հետ կնքվելիք պայմանագրի վճարային պարտավորություններն այնպես, որ Ձեր կազմակերպությունը հնարավորություն ունենա օգտվելու ակրեդիտիվային ձևով հաշվարկների բոլոր առավելություններից:

Ակրեդիտիվներ ներմուծողների համար

ՎՏԲ-Բայաստան Բանկն առաջարկում է փաստաթղթային գործառնությունների և առևտրային ֆինանսավորման ծառայությունների լայն ընտրանի: Ներմուծման ակրեդիտիվները պայմանագրով նախատեսված վճարային պարտավորությունների կատարման հուսալի միջոց են:

ՎՏԲ-Բայաստան Բանկի ներմուծման ակրեդիտիվները լուծում են ներմուծողների հետևյալ խնդիրները.

- Մատակարարման իրականացում պայմանագրով նախատեսված ժամկետներում





- Մատակարարման ժամանակ անհրաժեշտ փաստաթղթերի (որակի, քանակի, արտադրության երկրի, սանիտարական սերտիֆիկատներ և այլն) ճշգրիտ լրացում և ժամանակին տրամադրում արտահանողի կողմից
- Կանխավճարի փոխարինման այլընտրանքային միջոց: Արտահանողը ստանալով իր օգտին բացված ակրեդիտիվը, որպես կանոն, համաձայնվում է փոխարինել կանխավճարը ակրեդիտիվով:

ՎՏԲ-Հայաստան Բանկի գործող սակագները	
Ծառայություն	Սակագին
Ակրեդիտիվի բացում դրամական միջոցների ապահովության դեպքում	Ակրեդիտիվի գումարի 0,3% չափով առաջին եռամսյակի կամ դրա մի մասի համար, հաջորդող ամիսների կամ դրանց մի մասի համար գումարի 0,1% չափով (min 45.000 ՀՀ դրամ)
Ակրեդիտիվի բացում այլ ապահովության դեպքում	Պայմանագրային
Ակրեդիտիվի հաստատում օտարերկրյա բանկի կողմից	Պայմանագրային
Ակրեդիտիվի վճարում	Վճարվող գումարի 0,1% չափով (min 20.000 ՀՀ դրամ, max 100.000 ՀՀ դրամ)
Պայմանների փոփոխություն (բացառությամբ գումարի ավելացումից և ժամկետի երկարաձգումից), չեղյալ հայտարարում	35.000 ՀՀ դրամ

Ակրեդիտիվներ արտահանողների համար

Հետզկանչվող փաստաթղթային ակրեդիտիվը առուվաճառքի պայմանագրով գնորդի ստանձնած վճարային պարտավորության լրացուցիչ ապահովություն է՝ հօգուտ արտահանողի: Արտահանման ակրեդիտիվի պայմաններով, եթե տրամադրված փաստաթղթերը համապատասխանում են ակրեդիտիվի պահանջներին, վճարումն իրականացվում է անկախ գնորդի համաձայնությունից:

- ՎՏԲ-Հայաստան Բանկի արտահանման ակրեդիտիվները լուծում են արտահանողների հետևյալ խնդիրները.
 - Գնորդի կողմից մատակարարումից հրաժարվելու ռիսկի բացառում: Հետզկանչվող փաստաթղթային ակրեդիտիվը չի կարող փոփոխվել կամ չեղյալ հայտարարվել առանց բենեֆիցիարի համաձայնության: Հետևաբար, ստանալով իր օգտին բացված ակրեդիտիվը, արտահանողը լրացուցիչ վստահություն է ձեռք բերում առ այն, որ գնորդը չի հրաժարվի համաձայնեցված մատակարարումից, քանի որ վաճառողը ստանում է իրեն հասանելիք վճարումը փաստաթղթային ակրեդիտիվով նախատեսված պայմանների կատարման և փաստաթղթերի ներկայացման դիմաց:
 - Մատակարարման ժամանակ անհրաժեշտ փաստաթղթային ձևակերպումների ճշգրիտ ապահովման երաշխիք:



ՎՏԲ-Հայաստան Բանկի գործող սակագները	
Ծառայություն	Սակագին
Ակրեդիտիվի ժանուցում	0,15% (min 45 000 ՀՀ դրամ, max 150 000 ՀՀ դրամ)
Ակրեդիտիվի տրամադրում դրամական միջոցների ժամկետով	Ակրեդիտիվի գումարի 0,3% չափով առաջին եռամսյակի կամ դրա մի մասի համար, հաջորդող ամիսների կամ դրանց մի մասի համար գումարի 0,1% չափով (min 45.000 ՀՀ դրամ)
Ակրեդիտիվի տրամադրում այլ ապահովության դեպքում	Պայմանագրային
Գումարների մուտքագրում հաճախորդի հաշվին	Անվճար
Պայմանների փոփոխություն, ակրեդիտիվի չեղյալ հայտարարում	25.000 ՀՀ դրամ

Սարքավորումների ներկրման պայմանագրերում հաշվարկներ ակրեդիտիվների տեսքով

ՎՏԲ Հայաստան Բանկն առաջարկում է ներկրվող սարքավորումների ֆինանսավորում փաստաթղթային ակրեդիտիվների միջոցով:

Առաջարկվող ֆինանսավորման առավելություններն են՝

- առաջնակարգ արտասահմանյան բանկերից նպատակային ֆինանսավորման ներգրավման հնարավորություն;
- վարկերի համեմատ առավել ցածր տոկոսադրույքներ՝ 8-10 % տարեկան ԱՄՆ դոլարով կամ եվրոյով;
- վճարման հետաձգում մինչև 5 տարի ժամկետով:

Ներկրվող սարքավորումների արժեքը պետք է գերազանցի 300.000 ԱՄՆ դոլարին համարժեք դրամը:

ՎՏԲ խումբը համագործակցում է բազմաթիվ առաջնակարգ արտասահմանյան բանկերի հետ, ինչի շնորհիվ հնարավորություն է ընձեռնվում ներգրավելու նպատակային ֆինանսավորում արտերկրից առավել մատչելի պայմաններով:

Երաշխիքային գործարքներ

Բանկային երաշխիքը անհետկանչելի է, այն չի կարող հետ կանչվել երաշխիք տված անձի կողմից, եթե այլ բան նախատեսված չէ երաշխիքով:

Փորձը ցույց է տալիս, որ նույնիսկ գրագետ կազմված պայմանագիրը ոչ միշտ է ի վիճակի Ձեզ պաշտպանել Ձեր գործընկերների կողմից իրենց պարտավորությունների չկատարման ռիսկից: Քաղաքացիա-իրավական գործարքների մասնակից կողմերի ֆինանսական շահերի հսկումն ապահովելու հուսալի միջոց է հանդիսանում «ՎՏԲ-Յայաստան Բանկ» ՓԲԸ կողմից թողարկված երաշխիքը:

Բանկային երաշխիքը քաղաքացիա-իրավական պարտավորությունների կատարման ապահովման գործիք է, որի միջոցով երաշխավոր բանկը մեկ այլ անձի (պրինցիպալի) խնդրանքով գրավոր պարտավորություն է ստանձնում վճարել բենեֆիցիարին տրամադրված բանկային երաշխիքի պայմաններին համապատասխան՝ վերջինիս կողմից վճարման գրավոր պահանջ ներկայացնելու դեպքում:

Բանկային երաշխիքով վճարում է կատարվում միայն երաշխիքային դեպքի ի հայտ գալու պարագայում, այսինքն, երբ կողմերից մեկը չի կատարում պայմանագրով նախատեսված իր պարտավորությունները: Եթե երաշխավորված պարտավորությունը խախտվում է, բենեֆիցիարը կարող է վճարում պահանջել երաշխավոր բանկից: Եթե գործարքի պայմանները պատշաճ կերպով կատարվում են, ապա երաշխիքը կորցնում է իր ուժը գործողության ժամկետը լրանալուն պես: Այսպիսով, բանկային երաշխիքը պաշտպանում է կողմերի շահերը գործընկերների կողմից պայմանագրային պարտավորությունների չկատարման ռիսկից:

- մատակարարին կամ կապալառուին՝ ապրանքների կամ ծառայությունների չվճարումից

- գնորդներին կամ պատվիրատուին՝ մատակարարման կամ աշխատանքների չկատարման կամ ոչ պատշաճ կատարման ռիսկից

Բանկային երաշխիքը Պրինցիպալի բիզնեսի լրացուցիչ դրական գնահատական է, քանի որ երաշխիք տրամադրելիս՝ Բանկը միշտ մանրակրկիտ ուսումնասիրություն է անցկացնում իր հաճախորդի վարկանիշի վերաբերյալ: Այդ պատճառով բանկային երաշխիքը մաքուր հանդես է գալիս որպես ընկերության ֆինանսական կայունության լրացուցիչ գրավական՝ հաստատելով վերջինիս կարողությունը կատարելու իր կողմից ստանձնած պայմանագրային պարտավորությունները:

ՎՏԲ-Յայաստան Բանկն իր հաճախորդներին տրամադրում է հետևյալ տիպի բանկային երաշխիքներ՝

- Կանխավճարի վերադարձման երաշխիք
- Պայմանագրային պարտավորությունների կատարման երաշխիք
- Վճարային երաշխիք
- Վարկի վերադարձման երաշխիք
- Տեղեկային (մրցույթային) երաշխիք



ՎՏԲ-Հայաստան Բանկի գործող սակագները
Գործառնություններ ՀՀ տարածքում

Երաշխիքի տրամադրում, գումարի ավելացում, ժամկետի երկարաձգում դրամական միջոցների ապահովության դեպքում

Գործողության ժամկետը մինչև 90 օր	Գումարի 0,3% միանվագ min 10.000 ՀՀ դրամ
91-180 օր	Գումարի 0,5% միանվագ min 10.000 ՀՀ դրամ
181-270 օր	Գումարի 0,7% միանվագ min 10.000 ՀՀ դրամ
271-365/366 օր	Գումարի 1% միանվագ min 10.000 ՀՀ դրամ
366 օրից ավելի	պայմանագրային
այլ ապահովության դեպքում	պայմանագրային

Միջազգային երաշխիքներ
Երաշխիքի տրամադրում, գումարի ավելացում, ժամկետի երկարաձգում

Դրամական միջոցների ապահովության դեպքում	Երաշխիքի գումարի 0,3% չափով առաջին եռամսյակի կամ դրա մի մասի համար, հաջորդող ամիսների կամ դրանց մի մասի համար գումարի 0,1% չափով (min 45.000 ՀՀ դրամ)
այլ ապահովության դեպքում	պայմանագրային

Պահուստային ակրեդիտիվ

Որպես կանոն բանկային երաշխիքը ենթարկվում է այն երկրի օրենսդրությանը, որտեղ գտնվում է երաշխավոր բանկը: Երաշխիքի ենթարկումն այլ երկրի օրենսդրությանը հնարավոր է նախատեսել միայն կողմերի փոխադարձ համաձայնության դեպքում:

Պահուստային ակրեդիտիվը ֆինանսական գործիք է, որը շատ նմանություններ ունի բանկային երաշխիքի հետ: Ակրեդիտիվի այս առանձնահատուկ տեսակը կիրառվում է որպես պարտավորությունների ապահովման միջոց այն դեպքում, երբ պրինցիպալը չի կատարում պայմանագրով նախատեսված իր պարտավորությունները, հրաժարվում է վճարել մատակարարված ապրանքի (տրամադրված ծառայությունների) դիմաց կամ անվճարունակ է դառնում:

Պահուստային ակրեդիտիվները լայն տարածում են գտել հատկապես Ամերիկայի Միացյալ Նահանգներում: Այստեղ վերջիններս փոխարինում են այլ երկրներում ընդունված բանկային երաշխիքները, որոնք ԱՄՆ նահանգների մեծամասնության օրենսդրությամբ չեն կարող տրամադրվել բանկերի կողմից: Վերջին տասնամյակում ակրեդիտիվի այս տեսակը սկսել է տարածվել նաև Եվրոպական երկրներում:

Մեր Կորորդինատերը

Սպասարկման հետ կապված բոլոր հարցերով Դուք կարող եք ստանալ խորհրդատվություն՝ զանգահարելով Փաստաթղթային գործառնությունների և առևտրային ֆինանսավորման բաժին, հետևյալ հեռախոսահամարով՝

+ (37410) 58–25–84

կամ այցելել «ՎՏԲ-Հայաստան Բանկ» ՓԲԸ գլխամասային գրասենյակ՝ ք. Երևան, Նալբանդյան փ. 46 շ.

Միասնական տեղեկատվական ծառայություն՝ **87–87**

www.vtb.am